



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ**

« 23 » հուլիսի 2018թ.

№ 454 - Լ

Հ Ր Ա Մ Ա Ն

**ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ
ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 14-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի օգոստոսի 22-ի N873-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 2-րդ կետի դրույթները՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել հարկային և մաքսային ծառայությունների մրցութային և ատեստավորման հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Հարկային և մաքսային ծառայությունների մրցութային և ատեստավորման հանձնաժողովի քարտուղար նշանակել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ ՀՀ ՊԵԿ) անձնակազմի կառավարման վարչության մրցույթների և ատեստավորման կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ Աննա Ղազարյանին:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:



Դ.ԱՆԱՆՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2018 թվականի հուլիսի 23-ի
N 454-Ը հրամանի

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

**ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԵՎ
ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

Ռաֆիկ Մաշադյան	Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի առաջին տեղակալ (հանձնաժողովի նախագահ)
Վահե Հովհաննիսյան	Հայաստանի Հանրապետության վարչապետի խորհրդական
Ռուստամ Բադասյան	Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ
Օրի Ալավերդյան	Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության պետ
Հրաչյա Մուրադյան	Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի վարչարարության մեթոդաբանության, ընթացակարգերի և սպասարկման վարչության պետ
Աշոտ Մուրադյան	Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության պետ
Թելման Ասատրյան	Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչության պետ
Ասատուր Վարդանյան	Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության պետ
Կարեն Բեգլարյան	Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի մաքսային վիճակագրության, վերլուծության և ռիսկերի կառավարման վարչության պետ